

Ի՞նչ է ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՑՔԸ

ԱՌԱՋԱՐԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ՀՐԱՉ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին այսօր աշխարհով մէկ մարտահրաւէրներու, հիմնախնդիրներու, վարչական, բարոյական հարցերու խաչմերուկին վրան է: Արցախի թեմի առաջնորդ Պարգե Արքեպիսկոպոսի բանաձեւումով «Մեր ազգն փորձութիւններով է գնում: Մեր եկեղեցին էլ իր փորձութիւններով է գնում»: Ո՞ր ուղղութեամբ երթալ, ի՞նչ առաջնահերթութիւն տալ խնդիրներուն եւ անոնց վերաբերող լուծումներուն. նման բազմաթիւ հարցեր վստահաբար անքուն պիտի պահեն յառաջիկայ Եպիսկոպոսական ժողովին առնուազն կարգ մը անդամները:

Ինչպէս պատմութեան ընթացքին սկսեալ 5րդ դարու Շահապի վանի ժողովէն, Հայց. եկեղեցւոյ Եպիսկոպոսական ժողովներ գումարուած են եկեղեցւոյ կեանքին մէջ դաւանական, վարդապետական եւ աստուածաբանական հարցեր քննարկելու ինչպէս նաեւ կարգ ու կանոն հաստատելու նպատակով: Եպիսկոպոսական ժողովի արդիւնքներն ու եզրակացութիւնները կը ներկայացուին Կաթողիկոսին՝ վաւերացման համար, կամ ալ Ազգային եկեղեցական ժողովին (եկեղեցւոյ բարձրագոյն օրէնսդիր եւ վարչական մարմին) հաւանութեան համար: Անցնող հարիւր տարուան ընթացքին Եպիսկոպոսական ժողովը պաշտօնապէս միայն երեք անգամ գումարուած է: Վազգէն Ա. Կաթողիկոսի հրաւերով 1956 Հոկտեմբերին գումարուած ժողովին որոշուած էր «տարին գունէ մէկ անգամ գումարել» Եպիսկոպոսական ժողովը, բայց ինչ-ինչ պատճառներով այդպէս չեղաւ: Յաջորդը 1969ին էր ու անկէ ետք ո՛չ պաշտօնական ժողովներ գումարուեցան (միայն «խորհրդակցական»), ո՛չ ալ եկեղեցիին ու հաւատացեալները յուզող հրատապ հարցեր քննարկուեցան: Ուշագրաւ երեւոյթ է՝ որ ներկայիս Հայց. եկեղեցւոյ (Էջմիածինը եւ Անթիլիասը գումարած) 76 եպիսկոպոսներէն հազիւ երկու-երեքը նախապէս մասնակից եղած են որեւէ պաշտօնական եւ լիարժէք Եպիսկոպոսական ժողովի:

Եկեղեցւոյ ներկայ վերիվայրումները յատուկ նորութիւն մը չէ: Եկեղեցին ընդհանրապէս եւ եկեղեցւոյ նուիրապետութիւնը յատկապէս՝ անցնող առնուազն հարիւր տարուան ընթացքին բազմաթիւ խորունկ տագնապներ տեսած են՝ Կոստանդնուպոլսէն մինչեւ Էջմիածին, 1950ականներու Անթիլիաս-Էջմիածին «տագնապ»էն մինչեւ 1960ականներու եւ 1980ականներու երուսաղէմի տագնապները: Բայց ի տարբերու-

թիւն անցեալին, երբ արտաքին գրգռատնայանքները աւելի շեշտակի դեր եւ ներգործութիւն ունէին տագնապներու դրսեւորման վրայ, այսօր եկեղեցին անյաղթահարելի խնդիրներ չունի: Բոլոր ներքին հարցերը լուծելի են: Հաստատութիւններու կեանքին մէջ որեւէ լուրջ «տագնապ» յետաձգուած կամ չլուծուած խնդիրներու կուտակումն է: Այսօր նման կուտակումներու «տոմարը» լուրջ եւ հետեւողական քննարկումներու եւ լուծումներու առաջարկներ կը պահանջէ:

Իւրաքանչիւր կազմակերպութեան կեանքին մէջ պահեր կան, երբ անհրաժեշտ է յետադարձ հայեացք մը նետել որդեգրուած արժէքներուն վրայ ու խորհիլ անոնց առաջադրած պահանջներուն մասին: Այսօր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, որպէս կազմակերպութիւն, անյետաձգելիօրէն պէտք է յստակացնէ այժմեական հասարակական պայմաններու համահունչ իր առաքելութիւնն ու ուղենիւշները որպէսզի նորովի ծառայէ իրեն վստահուած ժողովուրդին:

Եպիսկոպոսական ժողովին ամենամահրաժեշտ քայլերէն մէկը պէտք է ըլլայ քննարկել, ճշդել եւ սահմանել եկեղեցւոյ «առաքելութեան առանցքը» այս արագընթաց եւ համաշխարհայնացուած 21րդ դարու յառաջիկայ տասնամեակներուն:

Անշուշտ եկեղեցւոյ առաքելութիւնը երկու հազար տարի առաջ ճշդուած էր առաքելներու շրջանին, Քրիստոսի հիմնական պատգամներուն եւ Աւետարանին հիման վրայ (օրինակ՝ ԴՄԿ. 4:16-20, ՄԱՏԹ. 28:19-20), բայց այսօր մեծամասամբ ո՛չ եկեղեցականները, ո՛չ ալ աշխարհականները յստակ գաղափար կամ միահամուռ ըմբռնում ունին թէ՛ ի՞նչպիսի սկզբունքներ, ուղենիւշներ, նպատակներ, արժէքներ եւ հեռանկարներ կը ներարկէ Հայ եկեղեցւոյ առաքելութիւնը: Անշուշտ եկեղեցին դարերէն եկող յստակ առաքելութիւն ունի, բայց ի՞նչպէս պէտք է իրականացնել այս առաքելութիւնը: Ի՞նչպէս այդ առաքելութիւնը հաղորդական ու իմաստալից դարձնել Երեւանի, Գիւմրիի, կամ Շուշիի, կամ Պէյրութի, Ապու Տապիի, Փարիզի, Ամսթերտամի, կամ Լոս Անճըլըսի, Թորոնթոյի, Գորտոպայի, Մելպուրնի կամ Հոնկ Գոնկի մէջ ապրող Հայուն համար:

Ինչպէս որեւէ աշխարհիկ կամ կրօնական կազմակերպութեան կեանքին մէջ՝ առաքելութեան առանցքի յստակացումը արժէքներու ամփոփագիր մըն է (ինչպէս ուղղափառ հաւատքի պարագային՝ Նիկիական Հանգանակը): Այնտեղ կ'ամրագրուին այնպի-

սի սկզբունքներ, որոնց ընդմէջէն տուեալ կազմակերպութիւնը իր հունաւորումը կը գտնէ եւ ուր կը սահմանուին այնպիսի չափանիւշներ, որոնց համաձայն կը գնահատուի կազմակերպութիւնը իր հետեւորդներուն, ինչպէս նաեւ ուրիշներուն կողմէ: Նման յստակ առաքելութեան ուղեցոյց մը արդիւնաւէտ է որովհետեւ կ'օգնէ կազմակերպութեան անդամներուն՝ որպէսզի կեանքի կոչեն ամրագրուած արժէքները: Սա որեւէ կազմակերպութեան վարքագիծը պէտք է ըլլայ, անոր հիմնաքարը՝ բոլոր առումներով:

Հայ եկեղեցւոյ ժամանակակից առաքելութեան կարեւորագոյն արժէքներու յստակացումը եկեղեցւոյ սպասաւորներուն պիտի տրամադրէ հիմնական ուղենիւշ մը, նպատակաուղղուած աշխատանքի եւ հոգեւոր ասպարէզի «բարտէս» մը որուն հիման վրայ կարելի պիտի ըլլայ եկեղեցւոյ իսկական նպատակներուն ծառայել եւ որուն շուրջ պիտի համախմբուին հոգեւորականներն ու աշխարհական սպասաւորները: Առաքելութեան եւ արժէքներու յստակացումը կենսունակութիւն կ'երաշխատէ եւ կ'ամրապնդէ ժողովուրդի հարազատութիւնն ու վստահութիւնը իրենց «հոգիի ծննդավայրին» նկատմամբ:

Անիմաստ է խօսիլ Հայ եկեղեցւոյ «ազգային» կամ «ընկերա-մշակութային» ծառայութեան կարեւորութեան մասին, առանց առաջնորդուելու անոր հիմնական հոգեւոր եւ կրօնա-բարոյական առաքելութեան սկզբունքներով: Որքան ալ ընդունինք որ եկեղեցին նաեւ ունի «աշխարհիկ» կարեւորութիւն, կ'արժէ ընդգծել որ՝ ինչպէս դարեր շարունակ եկեղեցւոյ առաջնային եւ գերագոյն նպատակը հոգեփրկութիւնն էր, եթէ ոչ «քաղցր լուծ», զորս իւրաքանչիւր հոգեւորական կ'ուխտէ իր ձեռնադրութեան որոշադրիլ խորհրդակատարութեան ընթացքին: (Չեռնադրութեան Մաշտոցը բազմիցս այս կէտը կը շեշտէ):

Հաստատութիւններ որոնք իրենց հիմնադրիչ եւ առաջնային առաքելութեանէն կը շեղին՝ ժամանակի ընթացքին կը դառնան ինքնանպատակ, իրականութեանէ եւ հասարակական կեանքէն հեռացած թանգարանային կառույցներ: Այսօր եթէ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ Հայ եկեղեցին ունի «ազգային» դեր եւ կարեւորութիւն՝ ապա այդ ի՞նչով կը տարբերի կուսակցութիւններու, մշակութային, բարեսիրական եւ հասարակական կազմակերպութիւններու ու կառույցներու դերէն եւ ծառայութիւններէն: Յայտարարելով որ հարց ոչ քննարկած է, ոչ ալ յստակ քաղաքականութիւն ճշդած է թէ ինչ է իր «ազգային» դերը, չնայած որ հոգեւորականներուն մեծամասնութիւնը աւելի հանգիստ կը խօսի «ազգայինին» կամ լողունգ դարձած «մեր հայրերու

սուրբ հաւատքին» մասին, քան հասարակութիւնը մտահոգող բարոյական եւ հոգեւոր նիւթերու մասին:

Կարելի չէ արժէքներու նկատմամբ յարգանք ներշնչել՝ առանց զանոնք կեանքի կոչելու. սէր արժեւորել, ըսել է սիրել: Արժէքները նաեւ կը ստեղծեն չափանիւշեր, որոնցմով նաեւ մենք մեր գործունէութիւնը կը չափենք: Յստակ եւ տարածելի արժէքներ պէտք է ուրուագծեն եկեղեցւոյ վարչական կազմակերպչական սկզբունքները՝ որպէս ուղեցոյց եկեղեցւոյ հաւաքական գործընթացին եւ անոր ղեկավար մտածողութեան:

Վերջապէս, իւրաքանչիւր եկեղեցիի կենսունակութիւնը առաջին հերթին կախուած է հաւատացեալներու ոգեւորութենէն, անոնց պատասխանատուութեան զգացումէն եւ մասնակցութիւնէն, ոչ թէ միայն եկեղեցականներու կամ աշխարհականներու փոքր խումբի մը «անօրինումներէն»: Այսօր շատ յստակ է որ կապրինք բողոքի եւ պահանջատիրական դարաշրջանի մը մէջ ուր հասարակութիւնը այլեւս բացարձակ իշխանութեան ու բռնատիրութեան հանդէպ ոչ թէ միայն իր վախը թօթափած է, այլ նաեւ որդեգրած է վճռակամ եւ հետեւողական պայքար՝ հաւաքական շահերու ի նպաստ: Մեր պարագային սա չի նշանակեր որ մարդիկ Հայաստանի կամ Սփիւռքի մէջ եկեղեցւոյ դէմ պիտի «ապստամբին», բայց կ'ընդգծէ այն իրականութիւնը, որ հասարակութեան սպասումներուն անտեսումը եկեղեցւոյ նուիրապետականութեան կողմիցումին կը տանի:

Այս առումով, եկեղեցին պէտք է պատրաստ ըլլայ ԱՊՐԵՅՆԵԼՈՒ եւ ոչ թէ միայն քարոզելու Հայ Քրիստոնեայ հաւատքը: Հայց. եկեղեցւոյ առաքելութեան առանցքը սահմանելու համար Եպիսկոպոսական ժողովը կրնայ սկսիլ ամենապարզ հարցադրումներով, զորս այսօր որեւէ նման մեծ հաստատութիւն մը պիտի հարցնէր իր ներքին կեանքը դրսեւորելու եւ իր արտաքին յարաբերութիւնները ճշդելու համար:

Ի՞նչ է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ նպատակը այսօր՝ 21րդ դարուն մէջ, այսինքն՝ ինչ է եկեղեցւոյ առաքելութիւնը այսօր եւ գալիք տասնամեակներուն: Ի՞նչն է կարեւորը եկեղեցւոյ համար, այսինքն՝ արժէքներու ճշդում եւ առաջնահերթութիւն: Ի՞նչ կ'ուզենք ըլլալ, ի՞նչ է եկեղեցւոյ ղեկավարութեան տեսիլքը: Ի՞նչ է եկեղեցւոյ ծրագիրը, մարտավարութիւնը: Եւ վերջապէս, ի՞նչ պէտք է ընել եւ ի՞նչպէս:

Նման հարցադրումներ, լուրջ մօտեցումներ եւ հետեւողական աշխատանքներ, մանաւանդ աշխարհականներու գործօն մասնակցութեամբ, արդէն կարգ մը համայնքներու մէջ արդիւնքներ տուած են եւ որոշ ծուխերու կենսունակութիւնն ու աշխուժութիւնն բերած են:

Այսօր 21րդ դարու երկրորդ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԳԱՂԹՕՃԱԽԸ

Բ.

ԿԱՐԴԻՆԱԿ ՌԻՇԸԼԻԷՕ՝ ՀԱՅԵՐՈՒ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄԸ

Հայ-ֆրանսական կապերու հին պատմութեան մէջ իւրայատուկ եւ կարեւոր տեղ ու դեր ունի կարդինալ Ռիշըլիէօ. ան ֆրանսական պատմութեան մեծագոյն եւ տիրական դէմքերէն է, հայ-ֆրանսական մշակութային յարաբերութիւններու ռահվիրան եւ մեծ դեր ունեցաւ Հայերու Ֆրանսա հաստատման մէջ:

Կարդինալ Ռիշըլիէօ, բուն անունով Արման-Ժան տիւ Փլեսի, կարդինալ եւ դուքս Ռիշըլիէօի (ծնած՝ 1585ին, Փուաթու նահանգի Ռիշըլիէօ ավանը, մահացած՝ 1642ին, Փարիզ), անոր հայրը՝ Ֆրանսուա տիւ Փլեսի Անրի Գ. թագաւորին մեծ տեղակալն էր:

Ռիշըլիէօ 1622ին կարդինալութեան աստիճան ստացաւ Պապէն, իսկ 1624ին Լուի ԺԳ. թագաւոր զայն Ֆրանսայի առաջին եւ գլխաւոր նախարար նշանակեց. 1631ին ան դուքսի տիտղոս ստացաւ: Կարդինալ Ռիշըլիէօ Ֆրանսայի իրողական ղեկավարը դարձաւ, իր քաղաքական ամբողջ գործունէութեան ընթացքին ան աշխատեցաւ բացարձակ միապետութիւնը ամրապնդել Ֆրանսայի մէջ, երկար պայքարեցաւ Հապսպուրկներու գերիշխանութիւնը ջնջելու համար եւրոպայի մէջ, զօրացուց նաւատորմը, վերակազմեց բանակը եւ յաղթանակներ տարաւ Հապսպուրկներուն դէմ. ան նաեւ Գանատայի ֆրանսական գաղթավայրերը ընդարձակեց: Մեծ դեր ունեցաւ նաեւ կրօնական գետնի վրայ եւ միսիոնարութիւններ

կազմակերպեց աշխարհի չորս ծագերուն:

Կարդինալ Ռիշըլիէօ, գիտակից՝ Հայերու ներկայացուցած արժէքին՝ Արեւելքի մէջ, ինչպէս նաեւ՝ Արեւելք-Արեւմուտք յարաբերութեանց իմաստով, իր պաշտպանութեան տակ առաւ Ֆրանսա ապրող Հայերը եւ միաժամանակ մեծ աշխատանք տարաւ հոծ թիւով Հայեր Ֆրանսա փոխադրելու համար: Միւս կողմէ, Արեւելքը կաթողիկէ աշխարհին կապելու հեռանկարով, ան ձեռնարկեց հայերէն գիրքերու հրատարակութեան, առաջին անգամ՝ 1633ին, թագաւորին հաւանութեամբ, արքունի տպարանէն լոյս տեսաւ հայերէն-լատիներէն բառարան մը «Բառգիրք Հայոց» անունով, միլանոցի կրօնաւոր Ֆրանչեսքօ Ռիվոլայի հեղինակութեամբ: Այս բառարանէն զատ, Ռիվոլա Միլանոյի մէջ հրատարակեց նաեւ հայերէն քերականութեան գիրք մը: Այնուհետեւ Ռիշըլիէօ հրատարակել տուաւ երկրորդ գիրք մը Պետրոս Պօղոս անունով հայ քահանայի մը պատրաստած «Առաւել պարզաբանութիւնք», եւ երրորդ մը՝ «Լատին Քրիստոնէական»ին հայերէն թարգմանութիւնը:

Կարդինալ Ռիշըլիէօի օրերուն կարեւոր թիւով Հայեր Ֆրանսա գաղթեցին եւ բնակութիւն հաստատեցին գլխաւորաբար Փրովանսի Մարսիլիա, Գասիս, Լա Միոթա, Թուլոն եւ Սի-Ֆուր քաղաքներուն, ինչպէս նաեւ Լիոնի մէջ: Անոնցմէ շատեր առեւտրականներ էին եւ կեդրոններ բացին իրենց հաս-

տատուած քաղաքներուն մէջ: Այս ժամանակ, Լուի ԺԳ. (1610-1643) եւ այնուհետեւ Լուի ԺԳ. (1643-1715) թագաւորներուն որոշումով, վեց-եօթը Հայեր արքայական հրամանագիրներով ֆրանսահայատակ ըլլալու շնորհին արժանացան:

ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՒԱՆՑԻՒ ՏՊԱՐԱՆԸ

Ֆրանսահայ գաղութի պատմութեան մէջ կարեւոր դեր ունեցաւ Ոսկան վարդապետ Երեւանցիի հաստատած տպարանը, որ մշակութային կարեւոր գործունէութիւն կատարեց:

Արդարեւ, Ոսկան վարդապետ Ղըջենց Երեւանցի, որ Ամսթերտամի մէջ տպարան բացած էր, որոշեց Ֆրանսա փոխադրուիլ եւ հոն տպարան բանալ: Այդ նպատակով ալ ան դիմեց Լուի ԺԳ. թագաւորին՝ Ֆրանսայի մէջ հայկական տպարան մը հիմնելու համար: Այս ժամանակ մեծ ազդեցութիւն ունէր նախարար Գոլպէր, որ Հայերուն մօտիկ բարեկամն էր. անոր բարեխօսութեան շնորհիւ թագաւորը 1669 Օգոստոս 11ին ստորագրեց հրովարտակ մը, ուր կ'ըսէր, որ «Հայոց եպիսկոպոս եւ Հայաստանի մեծ պատրիարքին փոխանորդ ու պատուիրակ» Ոսկան վարդապետ իրաւունք ունի Լիոնի, Մարսիլիոյ կամ ֆրանսական որեւէ քաղաքի մէջ տպարան բանալու, պայմանաւ միայն որ կաթողիկէ դաւանանքին հակառակ բաներ չպարունակեն այդ տպարանէն լոյս տեսնելիք հայերէն գիրքերը:

Ոսկան վարդապետ տպարանը բացաւ Մարսիլիոյ մէջ, 1673ին, եւ զայն կոչեց «Տպարան Ս. էջմիածնի եւ Ս. Սարգսի Զօրավարի»: Անոր աջակիցները եւ տպարանին աշխատակիցներն էին՝ Սողոմոն Լեւոնեան (Ոսկան վարդապետի քեռորդին), Մատթէոս Վանանդեցի Յովհան-

նիսեան, Մկրտիչ Զուղայեցի, Թադէոս Երեւանցի Համազասպեան եւ Նասիպ Գրիգորեան:

Նոյն տարին իսկ՝ 1673ին Ոսկան վարդապետ տպարանը Գրիգոր Նարեկացիի «Գիրք Աղօթից»ը (Մատեան Ողբերգութեան), «Գիրք ժամակարգութեան որ կոչի Ատենի» (երկուքն ալ՝ առաջին տպագրութիւն), «Գիրք Սաղմոսաց Դաւթի» եւ «Գրկուկ կարեւոր հանապազօրդեան» (Պարզատոմար, Լուսնացոյց եւ այլն): Տպարանը բանալէն ետք, յաջորդ տարին իսկ՝ 1674ին Ոսկան վարդապետ վախճանեցաւ, բայց տպարանը շարունակեց իր գործունէութիւնը մինչեւ 1686, լոյս ընծայելով տասնվեց հատոր հայերէն գիրք:

ՋՈՒԼՈՒԱԾ ՈՒ ԿՈՐՍՈՒԱԾ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Հայերու դէպի Ֆրանսա գաղթը հին անցեալ ու պատմութիւն ունի, եւ պատմականօրէն հաստատուած իրողութիւնն է, որ Ե.-Զ. դարերէն սկսեալ Հայեր եղած են Ֆրանսայի մէջ: Այս հիմամբ, բնականաբար, այդ հին գաղթողները ժամանակի ընթացքին իրենց ինքնութիւնը կորսնցուցած եւ ձուլուած են ֆրանսական ընկերութեան մէջ: Այս իմաստով, հետազօտութիւններու շնորհիւ, ԺԸ. դարէն սկսեալ Ֆրանսայի զանազան շրջաններուն մէջ հայկական ծագումի հետքեր սկսան յայտնաբերուիլ: Այսպէս, երկրին կեդրոնական գօտիին մէջ, պատմական Օվէրներ շրջանին Փիւի տը Տոմ նահանգին մէջ (Լիոնի շրջանէն եւ Լուար նահանգէն արեւմուտք եւ Մասիֆ Սանթրալի անմիջապէս հիւսիսը, ուրկէ կը հոսի Ալիէ գետը՝ իր զանազան հարկատուներով), լեռնային գաւառներու եւ հովիտներու մէջ ծուարած շատ մը գիւղերու մէջ, այլ տոհմանուններու շարքին, բաւական տարածուած է Տէզարմէնիէն (Désarméniens) տոհմանունը, որոնց գլխաւոր կեդրոնը համանուն Տէզարմէնիէն գիւղն է: Տէզարմէնիէնները, ինչպէս իրենց անունը ցոյց կու տայ, ծագումով Հայեր եղած են, որոնց նախահայրերը հին դարերուն գացած եւ այդ կողմերը հաստատուած են, ուր ճանչցուած են իբրեւ Հայեր (տէ գ'Արմէնիէն, des Arméniens, յոգնակի, կը նշանակէ Հայեր), եւ որ, հաւանօրէն, ժամանակի ընթացքին դարձած է տոհմանուն՝ Տէզարմէնիէն: Անոնցմէ ժամանակի ընթացքին զանազան գերդաստաններ ճիւղաւորուած են, որոնք Տէզարմէնիէնին մօտիկ հնչումով մականուններով ալ ճանչցուած են: Տէզարմէնիէնները սակայն գաղափար իսկ չունին իրենց ծագումին մասին, հետաքրքրուած իսկ չեն իրենց անունին ստուգաբանութեամբ եւ իրենք զիրենք կը նկատեն հին Օվերնիացիներ:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ «Ազգակ» (Շար. 2)

տասնամեակին Հայց. Առաքելական Եկեղեցին իր բոլոր նուիրակներու կան անհոգներով ու կառոյցներով իր ուժերն ու «հարստութիւնը» պէտք է համատեղէ, որպէսզի իւրաքանչիւր ծուխ, թեմ կամ եկեղեցական համայնք վերածուի իսկական հոգեւոր «տուն»ի մը, ուր Հաւատքը, Յոյսը եւ Սէրը համայնքային եւ հոգեւոր կեանքին հիմնաքարերն են:

Վարչական ու կազմակերպչական ծիրէն անդին ու աւելի կենսական Հայց. Եկեղեցին պէտք է մտաւորական շփում մշակէ հասարակութեան հետ՝ մարդկութիւնը յուզող այժմէական ընկերա-բարոյական ու այլ հարցերու մասին: Պաշտամունքային կամ ծխական բարեփոխումներ ցանկալի են եւ թերեւս անհրաժեշտ, բայց իմաստազուրկ են երբ հասարակութեան կամ բարեպաշտ ժողովուրդին առօրեային հետ ոչ առընչութիւն ունին, ոչ ալ ուղղակի ազդեցութիւն: Օրինակ՝ մկրտութեան ձէսի բարեփոխումը եւ կանոնաւորումը

շատ աւելի իմաստալից պիտի ըլլայ եթէ նաեւ նոյնքան լուրջ ժամանակ, մտածողութիւն ու ջանք թափուի հայ մարդուն բացատրելու, թէ ի՞նչ է մկրտութեան իմաստը եւ ի՞նչ է ձէսին առընչութիւնը շարք դարու իր կեանքին մէջ: Այսինքն՝ ի՞նչ է մկրտուած հայ քրիստոնէայ ըլլալու իմաստը ներկայ բազմակարծիք եւ բազմահոսանք աշխարհին մէջ, ուր հայ մարդը, ի տարբերութիւն հեռուոր անցեալին, մնայուն շփում ունի այլազան եւ ոչ աւանդական մտածողութիւններու եւ թեքումներու հետ:

Եկեղեցի մը առանց յստակ քրիստոնէական առաքելութեան՝ աշխարհիկ կազմակերպութիւն մըն է, զորից՝ իր հոգեւոր գործօնէն: Եկեղեցի մը առանց հաւաքաբար կամ անհատապէս աղօթող հաւատացեալներու՝ լոկ կառոյց մըն է: Եկեղեցի մը առանց ուրիշներու օգնելու պատրաստակամութեան եւ համայնքային ծառայութեան՝ պարզապէս անցեալի փառքերու պահեստանոց մըն է:

Սա է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ այսօրուան հիմնախնդիրը. մնացեալը՝ թէ՛ կուզ կարեւոր, մանրամասնութիւններ են:

Հ. Զ., Օքսֆորտ

Վարդի է միտքեր կամ քննադատութիւններ դրկել Հրաչ Չիլիկիւրեանի iHratch@gmail.com հասցեով կամ www.hratch.info կայքէջով: ■

ՎՐԻՊԱԿ
Վարդան Մատթէոսեանի «Հայերը Պոլիպիոյ մէջ... 5500 թէ 15000 տարի առաջ» գրութեան Ա. մասին մէջ («ՆՅ», Սեպտ. 10, թիւ 547), գրաշարական վրէպով մը՝ Պոլիպիոյ Պոկոթիա տեղաւուրը սխալմամբ տրուած է որպէս Պոկոթա (Քրդ. էջ, Բ. սիւնակ, վերջին պարբերութեան 6րդ տող): Կը խնդրուի նկատի ունենալ: